


ԺԴ. տարի / Թիւ 1873
Գ ի ն ը՝ 2 €

14^e année / N° 1873
Prix unitaire : 2 €

ԶԱԻՈՒՇՕՂՂՈՒ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԹՈՒՐՔԻԱ ՓԱԿԱԾ Է ԻՐ ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ»

Թուրքիոյ Արտաքին գործոց նախարար Մեւլիթ Չաուշօղլու, Անթալիոյ մէջ լրագրողներու հետ ասուլիսին անդրադարձած է Բերձորի միջանցքին, Հակարի կամուրջին վրայ Ազերպայճանի տեղադրած անցակէտին:

Ան շարք մը անհիմն մեղադրանքներ հնչեցուցած է Հայաստանի հասցէին՝ ըսելով. «Հայաստան տարբեր փոքր ճամբաներով ապօրինի զէնք ու մարդուժ կը դրկէ Լեռնային Ղարաբաղ: Ազերպայճան այս ամէնը բացայայտած է: Մեր անօդաչու սարքերը կը հետեւին: Այդ պատճառով ալ Ազերպայճան տեղադրած է Գշեալ անցակէտը, որ շատ կարեւոր է Լեռնային Ղարաբաղի եւ Ազերպայճանի ապահովութեան համար»:



Չաուշօղլու կրկնած է թուրք-ազերպայճանական այն անհիմն պնդումները, որոնց համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի տարածքները «Ազերպայճանի հողերն են»:

Թուրք դիւանագէտը նաեւ յայտարարած է, թէ Թուրքիա իր օդային տարածքը փակած է Հայաստանի «գրգռութիւններ»-ուն պատճառով:

«Մենք Հայաստանի առջեւ փակեցինք մեր օդային տարածքը՝ երրորդ երկիրներ թռիչքներու համար: Անհրաժեշտ պարագային՝ դէպի մեր երկիր օդանաւերու թռիչքները կ'արտօնենք, բայց չենք թողաւորեր, որ «յատուկ» օդանաւեր անցնին մեր տարածքով, քանի տակաւին [Հայաստանի կողմէ] գրգռութիւնները կը շարունակուին: Եթէ անոնք չդադարին, ապա մենք այլ միջոցներու կը ձեռնարկենք», – սպառնացած է Թուրքիոյ Արտաքին գործոց նախարարը, տեղի ունեցածին իբրեւ յաւելեալ պատճառ ներկայացնելով Երեւանի մէջ «Նեմեսիս» գործողութեան հերոսներուն նուիրուած յուշարձանին բացումը:

Թուրքիոյ նախագահի բանբեր Իպրահիմ Քալըն ալ յայտարարած է. «Պէտք չէր չսպասել, որ Անգարա անպատասխան թողէ Թուրքիան ցեղասպանութեամբ մեղադրելու քայլերը: Սա, ի հարկէ, յանգեցուց օդային տարածքի փակման»:

«ԱԶԵՐՊԱՅՃԱՆ ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ԿԸ ՎԱՐԷ Ո՛Չ ՄԻԱՅՆ ՑԵՂԱՅԻՆ ԶՏՄԱՆ, ԱՅԼ ՆԱԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

ԱՐՑԱԽԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Արցախի Արտաքին գործոց նախարարութիւնը հրապարակած է հետեւեալ յայտարարութիւնը՝ հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութեան ոչնչացման եւ իւրացման ուղղուած Ազերպայճանի քաղաքականութեան վերաբերեալ:

«Խստիւ դատապարտում ենք Ադրբեյջանի կրօնական կազմակերպութիւններին հետ աշխատանքի պետական կոմիտէի Գախազադի կողմից Մայիսի 2-ին կատարուած յայտարարութիւնը այն մասին, թէ հաշ վաճականները պէտք է լքեն Դաղիվանքը, քանի որ այն իբրեւ թէ պատկառանքով (Շար. էջ 2)

ԱՐՑԱԽ, ՄԱՅԻՍ 4՝ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ 144-ԴՊ ՕՐ

ԵՐԵՒԱՆ

ՀՕ-ՏԸ-ՖՐԱՆՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԶԱԻԷ ՊԵՐԹՐԱՆ ԿԸ ԶՕՐԱԿՅԻ ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ



Հօ-տը-Ֆրանսի շրջանային խորհուրդի նախագահ Զաիէ Պերթրան, որ այս օրերուն Հայաստան կ'այցելէ, Երեւանի մէջ հանդիպում ունեցած է Արցախի Արտաքին գործոց նախարար Սերկէյ Ղազարեանի հետ:

Արցախի ներկայացուցչութեան կեդրոնին մէջ տեղի ունեցած քննարկումին, Ֆրանսացի դիւանագէտը իր ամբողջական զօրակցութիւնը յայտնած է Արցախի ինքնորոշման իրաւունքին: Կողմերը ստորագրած են միացեալ յայտարարութիւն մը՝ միջազգային հանրութեան կողմէն լով պատիժներ կիրարկելու Ազերպայճանի վարչակարգին դէմ, նկատի ունենալով որ Պաքու տակաւին կը մերժէ Բերձորի միջանցքով մարդոց եւ բեռներու երկկողմ տեղաշարժը ապահովելու եւ ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային ատեանի որոշումը գործադրելու իր պարտաւորութիւնները:

Զաիէ Պերթրան ընդգծած է, թէ Ազերպայճանի սանձազերծած յարձակումները անընդունելի են եւ պէտք է դադրեցուին:

«Ուե՛ մէկը իրաւունք չունի անցակէտ հաստատելու, միջանցք փակելու, հարիւրաւոր մարդիկ բուժումէ զրկելու, իսկ երախաները՝ կրթութիւն ստանալու կարելիութենէն: Ուե՛ մէկը այդպիսի իրաւունք չէ տուած Ազերպայճանին: Ֆրանսա վերադարձիս ամէնուր պիտի ներկայացնեմ այս հարցը», – նշած է Պերթրան:

Ըստ միացեալ յայտարարութեան՝ Ազերպայճանի վարչակարգը ինչպէս իր իսկ քաղաքացիները ճնշելու գործելակերպով, այնպէս ալ Հայաստանի եւ Արցախի նկատմամբ ռազմական ծաւալապաշտութեամբ, կրնայ միայն պատերազմի, ակրածուրթիւններու, թշուառութեան եւ յուսահատութեան պատճառ դառնալ: ■

«ՆՈՐ ՅԱՌԱՔ» ԼՈՅՍ ԶԻ ՏԵՄՆԵՐ

Մայիս 8-ի Յաղթանակի տօնին պատճառով՝ «Նոր Յառաջ» լոյս չի տեսներ երեքշաբթի, Մայիս 9-ին:

Մեր յաջորդ թիւը՝ Հինգշաբթի, Մայիս 11-ին:

ՀԱՅԱՍՏԱՆ – ՖՐԱՆՍԱ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԱԾ Է ՀՕ-ՏԸ-ՖՐԱՆՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Վարչապետ Փաշինյանն Մայիս 3-ին ընդունած է Հօ-տը-Ֆրանսի շրջանային խորհուրդի նախագահ Զաիէ Պերթրանի գլխավորած պատուիրակությանը: Վարչապետը ողջունած է պարոն Պերթրանի այցը եւ Վայոց Ձորի մարզին հետ համագործակցության զարգացման փաստաթուղթին ստորագրությունը, որ պիտի նպաստէ երկու երկիրներու միջեւ տարածաշրջանային համագործակցության ընդլայնումին: Միաժամանակ, վարչապետը ընդգծած է ֆրանսական կողմին օժանդակությունը՝ Հայաստանի զարգացման ու բարեփոխումներու ծրագրի իրականացման գործին մէջ: Ֆրանսացի զինանագէտը շնորհակալութիւն յայտնած է ջերմ ընդունելության համար եւ աւելցուցած, թէ Վայոց Ձորի մարզին հետ ունին կապերը ընդլայնելու յստակ ծրագրեր, զանազան բնագաւառներու մէջ: Ան ներկայացուցած է Վայոց Ձոր եւ յատկապէս Ջերմուկ կատարած իր այցելության տպավորությունները: ■

ԻՏԱԼԻԱ

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆ ՅԱՆՁՆՈՒԱԾ Է ԻՏԱԼԱՅԻ ԼՐԱԳՐՈՂ ՖԱՐԻՆԱՅԻՆ՝ ԱՐՅԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼՈՒՍԱԲԱՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՐ

Ապրիլ 28-ին, Իտալիոյ մէջ Հայաստանի դեսպան Մովսէս Լամբարձումեան իտալացի գրող, լրագրող Ռենաթօ Ֆարինային յանձնած է Հայաստանի նախագահի հրամանագրով շնորհուած երախտագիտության շքանշանը՝ երկու երկիրներու միջեւ բարեկամական յարաբերություններու ամրապնդման եւ զարգացման, համամարդկային արժէքներու պաշտպանության գործին մէջ ունեցած ներդրումներուն համար:



Արարողության ներկայ եղած են շուրջ երկու տասնեակ հիւրեր՝ Իտալիոյ ներկայի եւ նախկին բարձրաստիճան պաշտօնատարներ, լրագրողներ, հասարակական գործիչներ: Տիկին Լամբարձումեան իր ելոյթին բարձր գնահատած է Ֆարինայի կարեւոր դերակատարությունը՝ Հայաստանի, հայկական հարցի եւ հայ մշակութային արժէքներու վերաբերեալ տեղեկությունները իտալացի հասարակության ներկայացնելուն համար: “Թէ՛ նախապէս իբրեւ երեսփոխան եւ թէ՛ ներկայիս որպէս ազատ լրագրող Ֆարինա երբեք չէ զլացած իր աջակցությունը՝ հայ ժողովուրդին: Ան անտեսելով սպառնալիքները եւ խոչընդոտները լուսաբանած է Արցախեան պատերազմը եւ այսօր ալ կը շարունակէ ազերպայճանական յարձակումներուն վերաբերող իրողությունները լուսարձակի տակ առնելու իր աշխատանքը”, – շեշտած է զեպսանուհին: ■

«ԱԶԵՐՊԱՅՃԱՆ ԱՐՅԱԽԻ ԴԵՄ ԿԸ ՎԱՐԷՆ Ո՞Չ ՄԻԱՅՆ ՑԵՂԱՅԻՆ...» (Շար. Ա. Էջէն) Գում է Կովկասեան Ալբանիային եւ վաղ թէ ուշ կը կառավարուի ալբանա-ուրդական կրօնական համայնքի կողմից: Ադրբեջանի պետական մարմինի ղեկավարի այդ յայտարարութիւնը հանդիսանում է Արդարադատութեան միջազգային դատարանի 2021 թուականի Դեկտեմբերի 7-ի որոշման կոպիտ խախտում եւ մի անգամ եւս ապացուցում է, որ Ադրբեջանի իշխանութիւնները ծրագրուած գործողութիւններով քայլ առ քայլ իրականացնում են Արցախի հայաթափման, հայկական պատմամշակութային եւ կրօնական ժառանգութեան ոչնչացման ու իրացման հետեւողական քաղաքականութիւն: ■



Այս համաձիւրի մէջ հարկ ենք համարում յիշեցնել, որ 2020 Նոյեմբերի 7-ադիվանքը գտնուում է Ռուսաստանի խաղաղապահների վերահսկողութեան տակ, որոնք կոչուած են ապահովելու քաղաքացիների անխափան եւ անվտանգ մուտքը՝ սրբավայր: Աւելին, ԻԻՆԷՍՔՕ-ն բազմիցս ընդգծել է, որ պատմամշակութային ժառանգությունը չպէտք է քաղաքական նպատակների գործիք դառնայ, եւ կոչ է արել բոլոր անհամ պետություններին յարգելու այս սկզբունքն ամբողջ աշխարհում: 2020-ի պատերազմի եւ Արցախի տարածքների բռնագրաւման հետեւանքով Ադրբեջանի վերահսկողութեան տակ են անցել շուրջ հազար հինգ հարիւր հայկական պատմամշակութային եւ կրօնական յուշարձաններ, այդ թում՝ վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր, հնագիտական վայրեր, բերդեր, ամրոցներ, սրբավայրեր եւ այլն: Ադրբեջանի յարձակումների հետեւանքով 44 օրերի ընթացքում այդ երկրի զինուած ուժերը դիտարեալ թիրախաորել, ոչնչացրել կամ պղծել են բազմաթիւ յուշարձաններ եւ սրբավայրեր, իսկ պատերազմից անմիջապէս յետոյ Բաքուի բարձրագոյն ղեկավարութիւնը նախաձեռնել է հայկական պատմական եւ կրօնական ժառանգութեան “ալբանացման” քաղաքականութիւն՝ փորձելով ջնջել Արցախում հայկական հազարամեայ ներկայութեան բոլոր հետքերը, ինչպէս նաեւ կեղծ պատմական թեզեր առաջ քաշելով՝ հայկական յուշարձանների ոչնչացումն ու այլափոխումն արդարացնելու նպատակով: Մասնաւորապէս, 2021 թ. Հաղորդի շրջանի Ծակուռի գիւղ այցելութեան ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, մատնացոյց անելով Ծաղկավանքի Ս. Աստուածածին եկեղեցու (ԺԲ. դ.) հայերէն գրությունները, Ըշել է, թէ դրանք կեղծ են եւ անձամբ հրամայել է ջնջել այդ գրությունները: Աւելի ուշ Ադրբեջանում նույնիսկ ստեղծուել է «ալբանական պատմութեան եւ ճարտարապետութեան մասնագէտների» աշխատանքային խումբ, որի նպատակն էր պայտէս կոչուած “ալբանական տաճարներից” հետացնել “Հայերի թողած կեղծ հետքերը”: Ադրբեջանական վանդալական արարքների վառ օրինակներից են նաեւ պատերազմի ժամանակ Ծուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու ունեւորումը, իսկ այնուհետեւ վերանորոգման քօղի տակ իրականացուող այլափոխումը, Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու (Կանաչ ժամ) ոչնչացումը, Մեխակաւանի հայկական Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու ամբողջական անեւումը եւ այլն: Այս բոլոր վանդալական դէպքերը, ինչպէս նաեւ Արցախի գրաւեալ տարածքներում մշակութային ժառանգութեան եւ յուշարձանների վիճակի գնահատման եւ դրանց պահպանութեան նպատակով ԻԻՆԷՍՔՕ-ի առաքելութեան մուտքը մերժելու Ադրբեջանի հետեւողական քաղաքականութիւնը վկայում են, որ Արցախի բռնագրաւում տարածքներում հայկական պատմամշակութային եւ կրօնական կոթողները վտանգուած են. դրանք կամ այլափոխուում, կամ ոչնչացուում են Ադրբեջանի վարած հայատեսաց պետական քաղաքականութեան պատճառով: Այսպիսով, Ադրբեջանը, փորձելով ամէն կերպ դուրս մղել Արցախցիներին իրենց պատմական հայրենիքից, Արցախի դէմ վարում է ոչ միայն ցեղային զտման, այլ նաեւ մշակութային ցեղասպանութեան քաղաքականութիւն: Կրկին դիմում ենք միջազգային հանրութեանը, համապատասխան բոլոր միջազգային կառույցներին, եւ առաջին հերթին՝ ԻԻՆԷՍՔՕ-ին, յորդորելով ձեռնարկել հրատապ եւ արդիւնաւէտ քայլեր՝ ապահովելու միջազգային առաքելությունների եւ համապատասխան փորձագէտների մուտքն Արցախի գրաւեալ տարածքներ՝ Ադրբեջանի վերահսկողութեան տակ անցած հայկական պատմամշակութային ժառանգութեան ու յուշարձանների վիճակը գնահատելու եւ միջազգային պաշտպանութեան տակ առնելու նպատակով: ■

NOR HARATCH
Journal trihebdomadaire en langue arménienne
Journal édité par SARL NorH Publications – 3, rue Charrier, 94000 Créteil
Adresse établissement secondaire : NorH Publications – 83, rue d’Hauteville - 75010 Paris
contact@norharatch.com / abonnement@norharatch.com
Directeur de publication : Aram Kerovpyan
CPPAP : 1125 | 90193 / ISSN : 2105-7672
Imprimé et distribué par Euclès Daily – 24, rue Turgot, 75009 Paris
Prix d’Abonnement annuel (France) : 250 € / Prix d’Abonnement annuel (Hors France) : 300 €
Pour les virements bancaires :
SOCIÉTÉ GÉNÉRALE – Agence Paris St Vincent de Paul (03320)
IBAN - FR76 3000 3033 2000 0206 9946 930 / BIC - SOGEFRPP

ՌԻԱՇԻՆԿԹՆԸ

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ուաշինգթոնի մէջ կը շարունակուէին ԱՄՆ-ու նախաձեռնութեամբ տեղի ունեցող հայ-ազերպայճանական բանակցութիւնները, որոնք սկսած էին Մայիս 1-ին ԱՄՆ-ու, Հայաստանի եւ Ազերպայճանի Արտաքին գործոց նախարարներ Պլինքընի, Միրզոյեանի եւ Պայրամովի մասնակցութեամբ, եւ եթէ ապաւինելու ըլլանք ամերիկեան կողմի յայտարարութիւններուն պէտք է աւարտէին Մայիս 4-ին:

Այս բանակցութիւններուն հակառակ փակ դռներու ետին ընթանալուն, դատելով «արտաժողով» տեղեկութիւններէն այնպէս կը թուէր, որ այլեւս խնդրոյ առարկայ չէ «համբաւաւոր» խաղաղութեան պայմանագիրը, այլ պարզապէս Հայաստան-Ազերպայճան յարաբերութիւններու բնականոնացման, փոխադարձաբար վստահութեան որոշ միջոցառումներու կը վերաբերէր խօսքը:

Արդարեւ, նախարար Միրզոյեան բանակցութիւններու երրորդ օրը՝ Մայիս 3-ին յատկապէս ընդգծած է, որ Արցախի ժողովուրդի իրաւունքներու եւ անվտանգութեան նկատառումը միջազգայնօրէն երաշխաւորուած երկխօսութեան շրջանակի մէջ եւ Ազերպայճանի ետ քաշուիլը հայկական ինքնիշխան բռնագրաւուած հողերէն, էական նշանակութիւն ունին համապարփակ կարգաւորման եւ տարածաշրջանին մէջ մնայուն կայունութեան համար:

Այսքանը արդէն բաւարար է եզրակացնելու համար, — առանց խօսելու խաղաղութեան պայմանագրի մասին, — որ նոյնիսկ հայ-ազերպայճանական յարաբերութիւններու բնականանոցումը իրատես ոեւէ անձի համար պարզապէս ցնորք մըն է, մանաւանդ եթէ նկատի ունենանք Ալիեւի գրեթէ միաժամանակ ըրած «նոր» յայտարարութիւնները, որոնք իրականութեան մէջ բնաւ նորութիւն ալ չեն պարունակեր բաղադրուած անոր ռազմատեսչ, հայատեսաց եւ ծաւալապաշտական վարքին: Պաքուի բռնատէրը, ի միջի այլոց, պնդած է, թէ «այսպէս կոչուած Լեռնային Ղարաբաղը, — որ գոյութիւն ալ չունի, — ներառելու որեւէ փորձ խաղաղութեան պայմանագրի բնագրին մէջ ոչ-շինիչ քայլ է»: Հետեւաբար, դեռ փարսախներով հեռու ենք համաձայնութեան որեւէ եզրէ:

Մայիս 3-ին, վարչապետ Փաշինեանի Ազգային ժողովին մէջ ըրած յայտարարութիւններն ալ նոր լոյս չեն սփռեր ուաշինգթոնեան այս բանակցութիւններուն վրայ, կամ նոր լոյս չեն ներշնչեր, նոյնիսկ եթէ ան ըսած է, թէ յատուկ թղթածրար մը կայ սեղանին վրայ: «Յատուկ թղթածրար» բառակապակցութիւնը իմաստային առումով կրնար անմիջապէս որոշ հետաքրքրութիւն մը առթել շատերու մտքին մէջ, բայց բնաւ տեղիք չկայ այդպիսի հետաքրքրութեան, քանի որ վարչապետին իսկ հաւաստումով այդ թղթածրարին մէջ «նոր որեւէ բան չկայ, որու մասին հրապարակաւ խօսած չըլլամ»:

Այս ամբողջը վերլուծելու պարագային, ակնյայտ կը դառնայ, որ կատարուածը «չուր ծեծել» է, ամերիկեան շօու մը պարզապէս, որ տարածաշրջանին մէջ որոշիչ դերը Ռուսաստանէն խլելու անոր քաղաքաքականութեան մէկ բաղադրիչն է վստահաբար: Բայց... բայց, ըստ Ռուբէն Վարդանեանի այս գործընթացը անկարելի է առանց Ռուսաստանի. «Դժուար կ'երեւակայեմ, թէ ինչպէ՞ս կարելի է խաղաղութեան պայմանագրի մը յանգիլ առանց Ռուսաստանի», յայտարարած է ան: Եթէ նոյնիսկ խօսքը այլեւս չվերաբերի խաղաղութեան պայմանագրին, Ռուբէն Վարդանեանի համոզումը կը մնայ նոյնքան ի գորտու: ■

ՄԻԱՅԵԱԼ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՅՈՒՅԱՆՄՈՒՇՆԵՐ ՓՈԽ ՏՈՒԱԾ Է ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Միացեալ Թագաւորութեան մէջ Հայաստանի դեսպան Վարուժան Ներսէսեան Մայիս 2-ին Լոնտոնի մէջ հանդիպում ունեցած է Բրիտանական թանգարանի տնօրէն Հարթուիկ Ֆիշերի եւ Հայաստանի Պատմութեան թանգարանի տնօրէն, դոկտ. Իւրիթ Պողոսեանի հետ: Դեսպանը իր ուրախութիւնը յայտնած է, որ Բրիտանական թանգարանին փոխ տրուած հայկական ցուցանմուշներ կը ցուցադրուին Լոնտոնի Բրիտանական թանգարանին մէջ «Շքեղութիւն եւ հզօրութիւն» Պարսկաստանէն Յունաստան» տիտղոսը կրող ցուցահանդէսին: Քննարկուած են Հայաստանի եւ Բրիտանական թանգարանին միջեւ համագործակցութեան ուղիները, ինչպէս նաեւ Բրիտանական թանգարանի Հայաստանի պատմութեան թանգարանին հետ համագործակցութեան ընդլայնման հեռանկարները:

Մայիսի 3-ին դեսպան Ներսէսեան ներկայ գտնուած է վերոնշեալ ցուցահանդէսի բացման:

Համադրուած հաւաքածոյով կը ցուցադրուին հայկական բազմաթիւ ցուցանմուշներ՝ փոխ առնուած էրբերունի թանգարանէն եւ Հայաստանի Պատմութեան թանգարանէն: ■

Ապրիլեան ոգեկոչումներ

ՓԱՐԻՋԵԱՆ ՇՐՋԱՆ

Անցեալ շաբաթավերջին, ինչպէս Ֆրանսայի հայաբնակ բոլոր համայնքներուն, նույնպէս ալ Փարիզեան շրջանի հայախոծ արուարձաններուն մէջ հանդիսաւոր արարողութիւններով ոգեկոչուեցաւ Ապրիլեան ճարտարապետութեան յիշատակը:

ԱԿՏՈՐՎԻԼ

Ակտորվիլ քաղաքին մէջ, «Աշտարակ» հրապարակին վրայ գտնուող Յեղասպանութեան զոհերուն յիշատակը յաւերժացնող խաչքարին շուրջ համախմբուած հայութիւնը եւ տեղական բարձրաստիճան պաշտօնատար-



Քաղաքապետ Գարվունաս Կարտասանէ իր ճառը

ները ծաղիկեպսակներ զետեղեցին ու յարգանքի տուրք մատուցեցին մեր բերաւոր նահատակներու յիշատակին: Ներկաներու կարգին էին քաղաքապետ Լիւք Գարվունաս, քաղաքային խորհուրդի անդամներ, Հայաստանի դեսպանուհի Յասմիկ Տոմաշեան, Արցախի ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեան, երեսփոխան Իզապէլ Սանթիակօ, ինչպէս նաեւ հայ հոգեւոր դասի ներկայացուցիչներ, ՀՄԸՄ-ի սկաուտներ:

Ակտորվիլի Սուրբ Մեսրոպ-Արապեան վարժարանի աշակերտներուն կողմէ Հայաստանի եւ Ֆրանսայի փառերգի կատարումն էտք, երոյթներ ունեցան Տիկին Տոմաշեան, քաղաքապետը, Յովհաննէս Գէորգեան եւ քաղաքի հայկական կազմակերպութիւններու միացեալ կոմիտէի ներկայացուցիչները:

ԻՄԻ-ԼԷ-ՄՈՒԼԻՆՕ

Փարիզի մերձակայ Իմի-լէ-Մուլինօ քաղաքին մէջ Յեղասպանութեան 108-րդ տարելիցին նուիրուած ոգեկոչման արարողութիւնը տեղի ունեցաւ Ֆրանքե-հայկական բարեկամութեան յուշակոթողին առջեւ:



Ներկայ էին քաղաքապետ Անտրէ Սանթիլի, փոխքաղաքապետ Արթուր Խանճեան, ծերակուտական Հերվէ Մարսէլ, Ֆրանսայի թեմի առաջնորդ Գրիգոր վարդապետ Խաչատրեան, շրջանի Ս. Ծաղկեպսակներու գեներալ Մարիամ Աստուածաբանեմիսյանական բարեկամութեան յուշակոթողին ծածկին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Աւետիս աւ. քհնյ Պալլըգեան, հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ վերապատուելի Ժոէլ Միքայէլեան, Հայաստանի դեսպանութեան եւ հայ համայնքային կառույցներու ներկայացուցիչներ, սկաուտներ եւ Իմի-լէ-Մուլինօյի ու յարակից քաղաքներու բնակիչներ:

Մասնակիցները եկեղեցւոյ բակէն յիշատակի երթով ուղեւորուեցան դէպի յուշակոթողը, ուր հնչեցին Հայաստանի եւ Ֆրանսայի փառերգերը եւ ծաղիկեպսակներ զետեղուեցան սրբադասուած նահատակներու յիշատակին:

Այնուհետեւ երոյթներով հանդէս եկան Անտրէ Սանթիլի, Արթուր Խանճեան, Հայաստանի դեսպանութեան առաջին քարտուղար Վարդուհի Սահակեան, Ֆրանսայի թեմի առաջնորդը եւ վերապատուելի Ժոէլ Միքայէլեան: ■

ՃԱՆՁՆԱՆՔ ՄԵՐ ԱՐԺԷՔՆԵՐԸ...

ՍՏԵՓԱՆ ՖՈՎ

Բնագիտության (physique) կալուածէն ներս, վերին աստիճանի համեստ եւ խոնարհ գիտաշխատող մըն է Ստեփան Ֆով եւ դասախօս՝ École Normale Supérieure-ի: Մօրը կողմէ հայ, մեծանուն այս գիտնականը հայերէն լեզուն սորված է սեբաստացի մեծ մօր՝ Սիրանոյշի ծունկերուն վրայ, իսկ ոտանաւոր արտասանելը՝ մեծ հայրիկէն՝ Գառնիկ Յովհաննիսեանէն: Ինչ կախարդանքով փոխանցած ըլլալու են իրենց թոռնիկին հայ լինելութեան արժէքը այս մեծ հայրիկն ու մեծ մայրիկը որ, փոքրիկն Ստեփանին սիրտը սկսած է արդէն բորբոքիլ անբացատրելի հայասիրութեամբ:

Հայկականութեամբ տոգորուած Ստեփանի հոգին, պատանի տարիքէն կը մղուի Հայոց պատմութիւնը տարածելու շրջապատին մէջ: Օր մը Que sais-je-ի հրատարակութիւն՝ «Արմենի» խորագրով հատորէն տասնեակներով կը գնէ գրախանութէն ցրուելու համար ծանօթներու եւ անծանօթներու: Նոյնիսկ ես արժանացած եմ այդ նուէրին, երբ հովուական այցելութեամբ գացած էի իրենց: Կրնամ ըսել մինչեւ այսօր տպաւորուած եմ պատանիին վսեմ այդ արարքէն: Զարմացած եմ նոյն ատեն, այդ տարիքին, — դեռ 14 տարեկան, — նման մտածում մը չղանալուն եւ գործադրելուն: Ինչ սէր կուտակուած ըլլալու է այդ պատանիին սրտին մէջ հանդէպ իր հայկական արմատներուն, որ պահանջք գագացած է գործնապէս գայն դրսեւորելու: Այդ սիրոյ մէջ կայ միանգամայն պատանի, անգիտակից հոգ մը, ընդվզում մը ընդդէմ անարդարութեան, ընդդէմ անմարդկային ոճիրի, գործուած՝ Հայութեան դէմ, որ ապագայ գիտնական, Ստեփան Ֆով, գիտակցօրէն պիտի դրսեւորէր Վայնշթայնի միջադէպով:

Վայնշթայնը, École des Hautes Etudes en Sciences Sociales-ի դասախօս մըն էր, մասնագիտութեամբ պատմաբան, կը դասաւանդէր Թրքական եւ Օսմանեան պատմութիւն: Յիշենք որ այս պատմաբանը իր յօդուածներով եւ հրատարակային ելոյթներով ճանչցուած էր որպէս Հայոց ցեղասպանութիւնը ժխտող պատմաբան:

1998-ին, Collège de France-ը, ի պատիւ Վայնշթայնի կը մտածէ Թրքական եւ Օսմանեան պատմութեան ամպիոն մը հիմնել որուն դէմ հայ համայնքէն առաջին բողոքողը կ'ըլլայ հանրաձայնօթ հասարակական գործիչ պարոն Գլօտ Մուլթաֆեան: Անկախ պարոն Մուլթաֆեանէն, Ստեփան Ֆով իր հերթին բողոքելով Collège de France-ի այս որոշումին դէմ, իր շրջապատի գիտնականներուն մօտ, (մանաւանդ այն գիտնականներուն՝ որոնց քուէարկութեամբ պիտի վաւերացուէր որոշումը), մեծ աշխատանք կը թափէ ձախողեցնելու համար ընտրութիւնը որպէսզի Վայնշթայն այդ պաշտօնին չկոչուի: Երկու ձեռնպահութեամբ, եւ միայն մէկ քուէի տարբերութեամբ, Վայնշթայն կ'ընտրուի: Այս արդիւնքին յուսախաբութիւնը բնաւ չի տկարացներ Ստեփան Ֆովը: Իր շափերով, իր մէջ աւելի կը զօրանայ շարունակելու հայ ժողովուրդի արդար իրաւունքի պաշտպանութիւնը:

Ներկայիս, Վայնշթայն ի կեանս չէ... Ամպիոնն ալ փակուած...

Ստեփան Ֆով, որդին է Institut Pasteur-ի յայտնի գիտաշխատողներէն՝ Ռոպէր Ֆովի եւ հոգեբոյժ Լուիզի, ծնեալ Յովհաննիսեան: Ծնած է Փարիզ: Նախնական կրթութիւնը ստացած է Սեւրի իր ապրած թաղամասի ֆրանսական ազգային վարժարանին մէջ, մինչեւ լիսէ: Համալսարանական բարձր կրթութեան համար, ուսումը շարունակած է Սէն Գլուի École Normale Supérieure-ի մէջ: Վկայուած է բնագիտութեանց ակադեմի տիտղոսով: 1984-ին, կը պաշտպանէ պետական իր արտաճառը Գիտնական Ալպէր Լիպապէրի հսկողութեամբ, որմէ ետք École Normale Supérieure-ի մէջ կը հրաւիրուի ուսուցման պաշտօնի: Բնագիտութեան աշխարհին մէջ, կարճ ժամանակի ընթացքին, մեծ համբաւ կը վայելէ, շնորհիւ յայտնաբերած նորութիւններուն՝ գիտահետազօտական կալուածէն ներս:

Դասախօս եւ գիտաշխատող Ստեփան Ֆով, 1987-ին Լիոնի մէջ École Normale Supérieure-ի նորահաստատ մասնաճիւղին մէջ, պաշտօնի կը հրաւիրուի, եւ իրեն կը վստահուի կարեւոր պարտականութիւններ, զորս կը ղեկավարէ ձեռնհասօրէն: Ան ճանչցուած է որպէս աւագ հիմնադիր Լիոնի École Normale Supérieure-ի Բնագիտութեան լապորաթուարին: Իրեն կը պարտին հետազօտութեան այլազան առանցքներու տեղակայումը:

Այստեղ, տասը տարի հարուստ վաստակ կ'ունենայ գիտաշխատող Ստեփան Ֆով: Կարծէ կարդալ գիտական թերթերու մէջ պատկառելի գիտնականներու կարծիքն ու բարձր գնահատականները իր յայտնաբերութիւններուն մասին:

Միջանկեալ ըսենք որ, 1988-ին, ցաւ ի սիրտ կը փակուի Միխիթարեաններու Սեւրի Մուրատ Ռաֆայէլեան վարժարանը: Մտահոգիչ եւ սարսուղ դու այս լուրէն չի ցնցուիր հայ հասարակութիւնը: Երկար տասնամեակներու հայեցի դաստիարակութեան լուսապայծառ ջահը բոցավառ



(ՄՐ)

պահող պատմական այս հաստատութիւնը կարծէք գոյութիւն չէ ունեցած: Պոռթկում չկայ: Համայնքին ծայր աստիճան անտարբերութիւնը մտածել կու տայ, եւ, նշան մըն ալ է թերեւ, որ այլեւս համակերպիւք թէ հիմնովին փոխուած է հայ հասարակութեան հոգեբանութիւնը, խորտակուած է ամէն զգայնութիւն, եւ ասկէ ետք ամէն ինչ որ կայ հայկականութեան հետ աղերսուած, կրնայ կորսուիլ: Մէկուն հոգը պիտի չըլլայ:

Աւելցնենք որ, այս առթիւ, հայ մամուլին մէջ ուշացումով հազիւ մի քանի յօդուած լոյս տեսաւ:

Ահա այսպիսի հոգեբանական մթնոլորտի մը մէջ է, որ նոյն տարին, Լիոնի մէջ, ամէնօրեայ վարժարանի մը հիմնումին նախաձեռնութիւնը համեստօրէն յանձն պիտի առնէի, աշակցութեամբ Լիոնի Հայ Առաքելական եկեղեցւոյ Ազգային միութեան վարչական կազմին: Մեծ էր վերապահութիւնը շատերու մէջ, Միխիթարեանի ճակատագրին պատճառով: Բայց պէտք էր փորձել:

Նոր հիմնուող վարժարանը անմիջական կարիքն ունէր անշուշտ հայ մտաւորականներու եւ կրթական գործիչներու բարոյական օժանդակութեան: Ստեփան Ֆովի Լիոնի մէջ պաշտօնավարութիւնը բարեպատեհ առիթ մըն էր, որ զինք հրաւիրէինք ղեկավար վարչական կազմին մէջ, օգտուելու համար իր փորձառութեան: Միայնօժար իր պատասխանը մեծապէս օժանդակեց ծրագրի յաջողութեան:

Տարիները թաւալեցան, վարժարանը կոչուեցաւ բարեբարներու անունով Մարգարեան-Փափազեան, աշակերտութեան թիւը կարեւոր աճ մը արձանագրեց եւ 1997-ին դպրոցը օժտուեցաւ նաեւ նորակառոյց շէնքով մը:

Նոյն տարուան վերամուտին՝ Ստեփան Ֆով կը ստիպուի հեռանալ Լիոնէն, կանչուած ըլլալով Փարիզի École Normale Supérieure-էն, հոն շարունակելու համար իր պաշտօնը:

Հոս տեղին է նշել, որ Հայաստանի պետական ներկայացուցիչներու կողմէ, Ֆրանսայի Հայկական Հիմնադրամը հիմնուեցաւ Լիոնի մէջ, ոչ միայն գործարար մարդոցմով, այլ նաեւ բանիմաց ազգային գործիչներու եւ կարող մտաւորականներու աշակցութեամբ: Այդ օրերուն Ստեփան Ֆով Լիոն կ'ապրէր, կազմակերպիչներու ուշադրութեան վրիպած չէր իր ներկայութիւնը, նկատի ունենալու համար զինք ալ որպէս հիմնադիր անդամ:

Անվհատ գիտաշխատող մըն է Ստեփան Ֆով, սիրահար մը իր գործին: Լապորաթուար կը մտնէ, ինչպէս մենակեաց մը իր աղօթատունը, ա'լ անժամանակին մէջն է ան, յայտնի չէ երբ դուրս կ'ելլէ հոնկէ: Կ'որոնէ, կը փնտռէ, կը յայտնաբերէ, փորձարկած իրերուն փաստարկումները կը տարազէ եւ վերջապէս յօդուածներով լոյս կ'ընծայէ զանոնք առ ի օգտագործութիւն: Ի յայտ բերած է տասնեակներով գիտեր: Բնագիտութեան հոշակաւոր գիտնականներ բարձր գնահատելով անոր յայտնաբերած տեսութիւնները, 2011-ին, զինք կ'անդամագրեն որպէս ակադեմիական Ֆրանսայի Գիտութեանց ակադեմիայի: Միեւնոյն տարին, ակադեմիական կը դառնայ նաեւ էօրօփաէա ակադեմիայի:

Իր համեստութիւնը չվիրաւորելու համար զանց կ'առնենք այստեղ նշել այն պատիւներն ու շքանշանները որոնցմով պարգեւատրուած է եւրօպայի կամ Միացեալ Նահանգներու զանազան կաճառներու կողմէ:

Բնագիտական յայտնաբերումները այնքան հետաքրքրութիւն ստեղծած են աշխարհի բնագէտներու մէջ որ, հրաւիրուած է բազմաթիւ երկիրներ դասախօսելու համար համալսարաններու մէջ, ինչպէս Միացեալ Նահանգներ, Գանատա, Մեքսիքա, Չիլի, Հնդկաստան, Ճափոն, Անգլիա, Գերմանիա, Իտալիա, եւ այլն: Այս շարքին շմոռնանք Հայաստանը, ուր հրաւիրուած է քանի մը անգամ: Հաճոյք մըն է իրեն համար համագործակցիլ Հայաստանի ֆիզիկոսներու հետ: Իր մատուցած ծառայութիւնները մեծապէս գնահատուելով, Հայաստան արժեւորած է զինք Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի արտասահմանեան ակադեմիական անդամի տիտղոսով:

Հայաստանի անկախութեանէն ետք, Հայաստան-Եւրոպա գիտական փոխյարաբերութիւններու ծիրէն ներս, Ստեփան Ֆով, Պրիւսէլի մէջ, կը յաջողի եւրոպական պայմանագիր մը ձեռք բերել, օգնելու համար Հայաստանի ֆիզիկոսներուն:

Ստեփան Ֆովի բնագիտական տեսութիւններու բովանդակութեան մասին պիտի կարենային արտայայտուիլ միայն այդ գիտաշխարհի մասնագէտներ, հետեւաբար այս գրութեան մտադրութիւնը, ինչպէս ենթախորագիրը կ'ըսէ, կը ձգտի ճանչցնել մեր արժէքները: Չեմ գիտեր ինչպէ՞ս, կատարուած այս իրողութիւնը պիտի ընկալուի գիտնականին կողմէ, քանի որ ան միշտ մերժած է հարցազրոյցի առաջարկներս, իսկ իր թելադրանքը եղած է... չգրել իր մասին:

Մինչ իր մասին կենսագրական տեղեկութիւններ քաղելու համար ստիպուեցայ օգտուիլ Ուիքիփետիայի տուեալներէն:

Բնագէտին գործը, Ստեփան Ֆովին համար, պէտք է ծառայէ մարդու բարիքին:

ՖՐԱՆՍԱ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԵՐԿՈՒ ՅՈՒՇԱՔԱՐԵՐՈՒ ԲԱՑՈՒՄԸ

Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցի ոգեկոչման արարողությունները ծիրեն ներս երկու նոր յուշակոթողներ զետեղուեցան Արելեյան եւ Կեդրոնական Ֆրանսայի մէջ:

• Առաջինը Լաքսու (Laxou) քաղաքն էր, որ իր հանրապարտէզներէն մէկուն մէջ խաչքարի մը զետեղումով 1915-ի Յեղասպանութեան եւ Արցախեան պատերազմի զոհերուն յիշատակի ոգեկոչման ու խոկումի վայրի մը տիրացաւ:



Լաքսուի խաչքարը

Արգարեւ, Ապրիլ 22-ին, «Արել» եւ «Մեծն Արելեյքի հայկական սփիւռք» («Diaspora arménienne du Grand Est») միութիւններու ջանքերով, Պաղտասարեան ընտանիքի նիւթական աշակցութեամբ, բացումը կատարուեցաւ հայաստանցի քանդակագործ Վաղարշակ Եղիազարեանի ստեղծագործած խաչքարին: Հոծ բազմութեան մը ներկայութեան, Նախկին ռազմիկներու դրօշակներով շրջապատուած խաչքարը քօղազերծեցին քաղաքապետ Լոուան Կարսիա, նահանգապետ Աննօ Գոշէ, եւրոպական խորհրդարանի երեսփոխան Նատին Մօրանօ, երեսփոխան էմանիւէլ Լաքրէս, Ֆրանսայի մէջ Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչ Յովհաննէս Գէորգեան, եւ երկու միութիւններու ատեն-



Լաքսուի խաչքարի քօղազերծման արարողութենէն

նապետերը՝ Տանիէլլ Քրաշմանեան եւ Անտրէ Նէրսիէ: Ծաղկեպսակներու զետեղումէն, ճառերէն եւ ազգային փառերգերէն յետոյ Կրքնոպլի հոգեւոր հովիւ Տէր Բաբգէն քհնյ Ստեփանեան օրհնեց խաչքարը:

Այնուհետեւ, հիւրերը եւ ներկաները հաւաքուեցան ընդունելութեան սեղաններուն շուրջ: Ապա գործադրուեցաւ օրուան յայտագրին երկրորդ մասը, բաղկացած՝ երկու բաժնէ: Նախ ներկայացուեցան Արցախը եւ Հայաստանը յուզող հարցերու մասին տեղեկութիւններ եւ տեղի ունեցաւ վիճարկում մը, մասնակցութեամբ տեղական քաղաքական անձնաւորութիւններու եւ գիրքերու հեղինակ Մարինա Տէտէեանի, գործարար Սեւակ Ժիճիրեանի եւ Յովհաննէս Գէորգեանի: Երկրորդ բաժինը յատկացուած էր երաժշտութեան: «Հայաստանի սիրտը» մանկական երգչախումբը, «Էրեբունի» պարախումբը, Սոնիա Կարապետեան (դաշնակ), Հայկ Թարվերդեան (դուդուկ) եւ Քեհնիկա Ալավերդեան (քանոն) խանդավառեցին ներկաները իրենց արուեստով եւ տաղանդով:

Այսպէսով, Մէրօթ է Մոզէլ նահանգը Նանսի եւ Սաքսոն-Սիլոն քաղաքներէն ետք ունեցաւ իր երրորդ խաչքարն ալ, որ կը կրէ հայերէն եւ ֆրանսերէն արձանագրութիւններ:

• Իսկ Լուառ է Շէր նահանգը ունեցաւ իր առաջին յուշքարը, նուիրուած՝ Հայոց ցեղասպանութեան: Պլուալի հայկական համայնքէն Անի Մանուկեան անցեալ տարի յաջողեցաւ իր սեփական ջանքերով զետեղել տալ յուշքար մը այն հանրապարտէզին մէջ, ուր արդէն գոյութիւն ունէին Ֆրանսայի համար զոհուածներուն յուշակոթողները:

2022-ի նախագահական ընտրութիւններուն հետեւանքով բացումը յետաձգուեցաւ: Այս ժամանակամիջոցին գաղութը կազմակերպուեցաւ եւ օժտուեցաւ «Արմատ» միութիւնով:

2023-ին, բացման արարողութիւնները տեղի ունեցան երկու օրերու ընթացքին:

Նախ, Ապրիլ 23-ին, միջեկեղեցական աղօթք՝ Սէն Լուի եկեղեցոյ մէջ, Մարսիլիայէն ժամանած Տէր Տրդատ Պաղիկեանի մասնակցութեամբ, այնուհետեւ՝ անոր ձեռամբ յուշքարի օծումը: Հուսկ, քաղաքապետարանի սրահին մէջ կատարուեցաւ ցուցահանդէսի մը բացումը, ուր ներկայացուած էին հայկական իրեր, գիրքեր եւ մանաւանդ Յեղասպանութեան պատմութիւնը նկարագրող 10 պաստառներ:



Պլուալի յուշքարը

Յաջորդ օրը՝ Ապրիլ 24-ին, Պետական ոգեկոչում՝ մասնակցութեամբ փոխ-նահանգապետ Միրէյ Հիժինի, երեսփոխաններ Ռոժէ Շոտոյի եւ Մաթիլտ Տէժոնքէի, նահանգային խորհուրդի փոխ-նախագահ Քաթրին Լէրիթիէի, քաղաքապետի կցորդ Ֆրետերիք Օռէին, ռազմական եւ զինուորական իշխանութիւններու եւ Նախկին ռազմիկներու, իրենց դրօշակներով: Միրէյ Հիժինի եւ «Արմատ» միութեան ատենապետու-



Պլուալի յուշքարի բացման արարողութենէն

Պլուալի յուշքարի բացման արարողութենէն

հի Անի Մանուկեանի ճառերէն ետք տեղի ունեցաւ իր վրայի հայերէն եւ ֆրանսերէն գրութիւններով յուշքարի քօղազերծումը: Այնուհետեւ, քաղաքական ղեկները իրենց ծաղկեպսակները, երախաները ծաղկեփունջերը եւ վառած մոմերը զետեղեցին յուշքարին շուրջ: «Արմատ» միութեան միօրեայ վարժարանի աշակերտները հնչեցուցին «Մեր հայրենիք»-ը:

Հուսկ, բազմութիւնը հիւրասիրուեցաւ ընդունելութեամբ մը եւ հրաւիրուեցաւ դիտելու ցուցահանդէսը: «Արմատ» դպրոցի աշակերտները երգերով եւ պարերով մասնակցեցան այս բացումին:

Հ. ՆՈՐՇԷՆ ■

Յ.Գ. - Թող ինձի թոյլ տրուի հոս անդրադառնալ այլեւ բնական եւ ասանդակական դարձած երեւոյթի մը: Ֆրանսայի մէջ, 2008-ին, Առլ քաղաքի յուշքարի բացումէն ի վեր, գետնուած յուշակոթողներու, խաչքարերու հայերէն գրութիւնները մեծամասնութեամբ կ'ըլլան արեւմտեան ուղղագրութեամբ: Եկեղեցական ծանուցումները, դպրոցական ծանուցումները... Գուցաւ: Միշտ ե՞րբ: Իրողութիւնը այս է ոչ միայն այն նոր գաղութներուն մէջ, ուր հայաստանցի մեր հայրենակիցները մեծամասնութիւն կը կազմեն, այլ նաեւ ուրիշ քաղաքներու մէջ: Արդէն արեւմտահայերէնը կորսնցուցիմք կամ կորսնցնելու ճամբուն վրայ ենք, նոյն ճակատագրին պիտի արժանանայ նաեւ մերօրայեան ուղղագրութիւնը:

Հասցէները՝

- Laxou 54220 : Parc d'Agrement - Rue de la Saône
- Blois 41000 : Place de la République - Square du 8 mai 1945 et 11 novembre 1918

ԱԼՖՈՐՎԻԼԻ «ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ-ԱՐԱՊԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս, Ալֆորվիլի «Սուրբ Մեսրոպ-Արապեան» վարժարանի աշակերտները այցելեցին Հայաստան, 21-էն 28 Ապրիլ:

Շատոնց արդէն աւանդութեան վերածուած այս պտոյտ-այցելութեան մասնակցեցան Ե. եւ Զ. կարգերէն 19 աշակերտներ՝ իրենց դաստիարակներուն եւ պատասխանատուներուն ընկերակցութեամբ:

Եօթը օրերու ընթացքին, մեր աշակերտները առիթը ունեցան վայելելու գեղատեսիլ տարբեր վայրեր, ծանօթանալու հայրենաբնակ մեծահասակներու եւ տարեկիցներու, եւ դաստիարակիչն ու հաճելին միախառնելով ապրեցան անմոռանալի օրեր:

Խումբը Երեւան ժամանեց 21 Ապրիլին:



(DR)

Առաջին օրը տրամադրուած էր անհրաժեշտ դասաւորումներու: Յաջորդ օրերը յագեցած էին ճոխ ծրագրով. մեր աշակերտները այցելեցին հոգեհարազատ վայրեր, որոնց ծանօթ էին նկարներու, տեսերիզներու, երգերու կամ բանաստեղծութիւններու ընդմէջէն: Այս անգամ սակայն ծանօթացումը կը կատարուէր առանց թուղթ-մատիտի, առանց համակարգիչի, առանց նոյնիսկ ուսուցիչի. հայրենի հողը, օդը, ջուրը եկած էին փոխարինելու այդ բոլորը՝ դպրոցի գրասեղաններէն ստացած իրենց գիտելիքները դարձնելով շօշափելի իրականութիւններ:

Արին բերդ, Գառնիի տաճար, Գեղարդի վանք այցելը մեր պատանիներուն հոգիներուն մէջ դրոշմեցին հայրենիքը մօտէն ճանչնալու եւ սիրելու անգնահատելի ապրումներ:

Այսպէս, «Սուրբ Մեսրոպ-Արապեան» վարժարանի սաները շրջեցան Երեւանի փողոցներուն մէջ, լսեցին հայերէն, խօսեցան հայերէն, ապրեցան հայերէնով, այցելեցին Մատենադարան, տեսան հազարաւոր տարիներու անցեալ ունեցող հայատառ ձեռագիրներ, մագաղաթներ, մագաղաթներու պատառիկներ, Մեսրոպ Մաշտոցի արձանին դիմաց ուխտեցին ըլլալ ջահակիրները՝ «Սուրբ Մեսրոպ-Արապեան» հայաբոյր օճախի առաքելութեան, Միծեռնակաբերդի մէջ հաստատեցին իրենց հաւատարմութիւնը նահատակներու կտակին, հոգեւոր աւիշ ստացան Սուրբ Էջմիածինէն, Սուրբ Գայիանէ եւ Սուրբ Հովհաննէ տաճարներ դիտելով ըմբոշանեցին հայկական եկեղեցական ճարտարապետութեան հարուստ աւանդը: Մարգարապատի մէջ ուխտեցին մնալ պահանջատէր եւ միշտ պատրաստ՝ պայքարելու Հայաստանի եւ հայ ժողովուրդի իրաւունքներուն համար: Եղան Գիւմրի, ուր մասնակցեցան խաչքար քանդակելու աշխատանոցին, ծանօթացան կաւագործութեան, կազմեցին անօդաչու օդանաւեր: Վայելեցին Արագածի հրաշաբոյր բնութիւնը, Բիւրականի մէջ տեղեկութիւններ ստացան հայ գիտական հանճարի ստեղծագործութիւններուն մասին: Ալֆորվիլի քոյր քաղաք Օշականի մէջ ապրեցան ընտանեկան հարազատութիւն, տեսան Խոր Վիրապը, ուրկէ հիացումով դիտեցին Արարատի վեհօթիւնը: Հաճելի պահեր անցուցին կապուտաշէտ Սեւանի եւ Պարզ լիճի փոքրոն: Պատմութեան Թանգարանին մէջ հպարտացան մեր անցեալի փառքով:

Պտոյտներու ընթացքին աշակերտներուն ընկերակցեցան մասնագէտ զբօսավարներ, որոնք կրցան գոհացում տալ բոլորին հետաքրքրութիւններուն:

Դաստիարակչականի կողքին, երգը, պարը, խաղն ու խինդը համեմեցին մեր պտոյտները՝ զօրացնելով ընկերական կապը, ամրացնելով պատկանելիութեան զգացումը եւ զարգացնելով ընկերասիրութիւնը:

Ջանազան առիթներով կատարուած առցանց հանդիպումներու միջոցով ստեղծուած կապերը դարձան իրական, աւելի հարազատ եւ նոյնիսկ ապագայի համար փոքրիկ ծրագրեր մշակուեցան:

Դպրոցական տարեշրջանի ընթացքին նման ծրագրի մը իրականացումը նպաստեց, որ սփիւռքի մէջ մեծցած, հայրենիքէն հեռու ապրող պատանիին համար ամէն բան դառնայ շօշափելի. մայրենի լեզու, պատմութիւն, մշակոյթ, մարդկային յարաբերութիւններ, հեռակայ ընկերներ դառնան ապրող ճշմարտութիւններ: Ահա, թէ ինչու անհրաժեշտ են նման նախաձեռնութիւնները:

Վստահ ենք, որ անցնող օրերու յիշատակները անջնջելի պիտի մնան եւ գեղեցիկ երանգներով պիտի պարուրեն մեր սիրելի աշակերտներուն հոգիները: ■

Կ Ա Մ Ո Ւ Բ Ձ

ՎԵՊ

Վահե ՕՇԱԿԱՆ

Սան Ֆրանսիսքօ, 1988

- 3 -

...Բայց անշուշտ չսպասելով մտիկ իսկ չընելով իր պատասխանին ու խօսելով իր պատիկ տղուն մասին, մինչ ինք կը փորձէր պատմել ինչպէս երեք տարիէ ի վեր Չէյս Մենսֆիլդը պանքին մէջ կ'աշխատէր ու վարժուէր էր Ամերիկացիներուն հոտին, քալելու, նստելու ու մանաւանդ խօսելու ձեւին, պիտի պատմէր նոյնիսկ ինչպէս տնօրէնը ձեռքը ուսին դրած խօսեր էր հետը անգամ մը Հայերու մասին թէ նիւ Եորքի իր ատամնաբոյժը հայ մը եղած է, որուն հայրը ամէն օր կու լար տունը նստած դուրս չէր ելլեր պէտք է որ դուք Հայերդ մոռնաք անցեալը տնօրէնին ձայնը յանկարծ այնքան մարդկային, գրեթէ հայրական, մայրական թուեր էր, գոցկանայ գորգերուն մէջ օֆիսին, մահականի սեղանին քով կայնած, նոր ածիլուած ժպիտով այժ՛ ըսեր էր ինք այժ՛ Պարոն տնօրէն այնքան անկեղծ զգացումով մը որ ինքն ալ անակնկալի եկեր էր, հիմա օֆիսին դռան մէջ կայնած երկիւղած, խոնարհ, պատրաստ ամէն զոհողութեան որեւէ բանի համար, պատիկ մէկը եղած պարոն Շուարցի հսկայ մարմնին քով անցեալ չկալ որ մոռնաք Պարոն տնօրէն, այդ պատմութիւնները հին բաներ են... ըսեր էր բառերը զգուշութեամբ ընտրելով ու տնօրէնը խնդաքեր էր խելացի տղայ ես դուն, ես կը սիրեմ խելացի, աշխատող մարդիկը ու չէր գիտցեր ինչպէս քաշէր մարմինը անոր խոշոր կրոր թաթէն որ հանգչեր էր ուսին վրայ: Բայց ի վերջոյ պանքայէն ալ ելեր էր, որովհետեւ շատ քիչ ու դանդաղ կը հասնէր դրամը իր մօտ եւ համբերութիւն չուրիմ, Շոն նստած ծովահայեաց սրճարանը, բազմութիւնը միս ու ձանձրոյթ ծորող, թմրած, կիսակենդան բայց անտեղիորէն աղմուտ այդ մարդիկը, իրար դէմքով, շրթունքով, ծիծերով ու յետոյքներով սնանող, սիրքի կենդանիներու նման, որոնք յոգներ են իրենց նիւմէրոյէն ու հիմա կը հանգչին իր համատարած գուրգուրանքին մէջ տեղաւորուած որպէս թէ իրեն մաս կազմէին, բազմութիւններու աղմուկը ականջին մէջ տակաւին որմէ սակայն դուրս մնացեր էր ձոնը, աստուածային Ամերիկացին իր խոշոր մատանիին մէջ պահուած ուժով, դրամին, ճոխութեան, զօրութեան տուած միսթիք յատկութիւնը հաւաքած իր ձեռքին մէջ սեղանին վրայ հանգչած կէս ժամէ ի վեր եւ որուն այնքան ուզած էր գոնէ երկվայրկեան մը անկէ գաղտնի, փախստական դպնալ, զգալ այդ յաջողած մարդու հոտով շրջապատուած մարմիններու զգայնութիւնը, գիտնալ գաղտնիքը,

սպանալիքը, ... ու հագիւ կրցած էր զսպել իր ձեռքը հոն շարժելէ, սակայն անկարող՝ աչքը հեռացնելու ողորկ, վարդի պէս անուշ մորթէն, յետոյ տանելով աչքը դէպի նուրբ, լեցուն մատները, մաքուր, կոր ու կարմիրի զարնող եղունգներ...: Պապադի՞ր՞նց գործ կ'ընէ հարցուցեր էր յանկարծ, ցնցելով զինք, նստելով աչքին հօր անձկագին դէմքը լուսեան հեռաւորութեան մէջ սառած, հայրը զոր չէր կրցած ճանչնալ ու հասկնալ թէ ան ինչպէս կը կառչէր կեանքին առանց դրամի ու ապահովութեան, պարզապէս պատերու վրայ մագլցող խոտերու պէս երթալով ուր որ կրնար, առանց տեղ մը նպատակ ունենալու կամ ետին արմատ մը պահելու, այդպէս օդին մէջ կախուած, զինքն ալ հետը պարապուցեան, անորոշութեան մէջ տանելով առանց որ իրար հետ կապ մը ունենային, երկուքն ալ, բոլոր անդամներն ալ ընտանիքին կորսուած մարդէ-մարդ պատէ-պատ տարածութեան մէջ աղբարդ ի՞նչ կ'ընէ ձոնը առանց պատասխանի սպասելու առաջին հարցումին՝ որուն պատասխանը հաւանաբար գիտէր ալ, տակաւին անշարժ, մայրամուտի գաղջ, իւզոտ մակերեսին տակ ապաբարոյ երջանկութեամբ մը ծեփուած, լուսաւորուած՝ իբրեւ թէ աշխարհի մէջ ողբերգութիւն ու վիշտ ըսուած բաները չէին պատուեր ամէն վայրկեան կեանքի փխրուն նիւթը, կտաւը արին ու վախ լացող միայնակ, անարձագանգ մարդիկ ան... ան ուրիշ մարդ է... կուսակցութիւնը կալ բայց Աբօն տարբեր մարդ էր, բոլորովին ուրիշ մէկը ոչ թէ պատանութեանէն արդէն - երբ օրերով հիւանդ կը պառկէին դէմ-դիմաց պատիկ սենեակին տաք շունչին մէջ հագիւ խօսելով, սպասելով որ հայրը գար իրիկուան իր դերձակի խանութին բոլոր հոտերով, գորս այնքան կը սիրէր մանաւանդ ածուխին հոտը, որ կը մնար ժամերով անոր վրայ, հայրը որ կու գար տուն իր տարածուն, թափ-թիփած կարօտը ձեռքերուն մէջէն վար իչնալով ու երկու եղբայր յանկարծ մօտեցնելով մութին ու հօրը կուզը տնկած կերպարանքին, որ կորսուած էր իր անկարողութեան մէջ հաղորդելու որեւէ զգացում - այլ աւելի ուշ, երբ Աբօն կուսակցական եղեր էր, կիրակի առտունները եկեղեցի գացողի պէս կը պատրաստուէր ակումբ երթալու, կոնակը շիտակ կը քալէր, կը խառնուէր բարձր խօսող, անհանդարտ կայնող, շարժուն վտանգաւոր տղոց խումբերուն սակայն մնալով քիչ մը առանձին, տարբեր, մինչ ինք սկսեր էր դրամ շահիլ:

(Շար. 41)



CONSEIL FRANÇAIS-ARMÉNIENS



Alain Navarra-Navassartian

PhD histoire de l'art et de la sociologie, Président de HYESTART

"Tous arméniens, tous différents: les multiples visages de l'immigration arménienne en France et leur cohabitation"



Maxime K. Yevadian

PhD, Chercheur associé au laboratoire CNRS d'HiSoMA, titulaire de la Chaire d'Arménologie de Lyon

"1923-2023, comment parler du traité de Lausanne aujourd'hui?"

ANIMATEUR : Vaner Harutyunyan, Directeur du CFA

Conférence-débat suivie d'un verre d'amitié

Places limitées - Préinscription recommandée

contact@francais-armeniens.com

Lieu : Espace Garbis Manoukian, 40 rue d'Arménie, 69003 Lyon



16 MAI
2023
À 18:00

IL PESCATORE
Pizza artisanale

Du mardi au samedi
de 12h à 15h / de 19h à 22h
1 rue Marcel Sembat,
94240 L'Hay-les-Roses
Tél : 01 466 466 12 **Sur place ou à emporter**
Nous sommes aussi au marché de Bourg-la-Reine, tous les mercredis et samedis

Kilikia
Traiteur arméno-libanais
Epicierie fine

25 avenue Jean - Jaurès, 92140 Clamart
du mardi au vendredi 10h / 20h
samedi 9h / 20h
Pour toute information ou commande
rdv sur www.kilikia.fr
01 41 46 93 04
traiteur@kilikia.fr
facebook kilikia armen

Erevan Artisan / Ebniste d'art
Restauration de meubles / Tapisserie
Georges ASSADOURIAN

30 ans

93 rue de la Cosarde, 94240 l'Hay-les-Roses
Tél : 01 45 47 02 49 / 06 08 82 79 81
www.erevan.fr

Leonidas
Fresh Belgian Chocolates

Mardi au Samedi 9h30 - 13h / 15h - 19h30
Dimanche 10h à 13h
20 Avenue de la Division Leclerc / Antony
Tél : 01 46 68 28 21

Ձեր ծանուցումները եւ գովազդները կրնաք ուղարկել annonces@norharatch.com հասցեին:
Veuillez envoyer vos annonces à l'adresse ci-dessus

«Նոր Ֆառաջ»-ի
տարեկան բաժանորդագրություն նուիրեցե՛ք.
Հեռաձայն՝ 01 55 32 06 72,
Էլ-հասցե՝
abonnement@norharatch.com

RENCONTRE
avec
Hrair HERATCHIAN
et **Ara KRIKORIAN**

VENDREDI
12 MAI 2023
À 20H30

autour de leur dernier livre

Le Dictionnaire biographique Arméniens d'hier et d'aujourd'hui

Présentation, échanges & dédicaces

Un cocktail sucré clôturera la soirée - Entrée libre

Le Dictionnaire biographique. Arméniens d'hier et d'aujourd'hui, sans équivalent dans la production éditoriale en diaspora, est le résultat de plusieurs années de travail, engagé par ses auteurs en 2015 au lendemain des commémorations du centenaire du génocide des Arméniens. Il contient une sélection assumée de 3 200 biographies de personnalités d'Arménie et de la diaspora, connues ou méconnues, voire inconnues, décédées ou en vie, et appartenant à toute la palette possible des activités humaines.


Ce Dictionnaire est signé Hrair Heratchian et Ara Krikorian, deux personnalités bien connues par notre lectorat pour leur engagement au service du patrimoine socio-culturel arménien et leur souci constant de faire partager leurs connaissances aux générations actuelles et futures. Liés par une vieille amitié née sur les bancs du collège arménien des Pères Mekhitaristes de Sévres, Hrair et Ara, une fois encore, ont décidé de conjuguer leurs efforts pour réaliser cet ouvrage.

à la **Maison de la Culture Arménienne (M.C.A.)**
31 avenue Bourgain - 92130 Issy-les-Moulineaux
Infos : 06 51 13 81 37 - mca.issylesmoulineaux@gmail.com

MCA ISSY
MAISON - CULTURE ARMÉNIENNE
ՀԱՅ ԿՈՒԼՏՈՐԱՏՈՐ ՏՈՒՆ

GAÏDZ - Nor Serount Association Culturelle
ԿԱՅԾ - Նոր Սերունդ Մշակութային Միություն
et
Association Civile Arménienne S. D. Henschakian

INVITATION
PRÉSENTATION DE LA BANDE DESSINÉE
Pour les grands et les petits




En présence de l'auteur Gorune Aprikian

VENDREDI 12 MAI 2023 À 20H30
ENTRÉE LIBRE
CONTACT : 06 12 75 05 31

Salle Nourhan Fringhian
6 avenue Bourgain
92130 Issy-les-Moulineaux

Hratch (Anouchavan) KIRMIZIYAN
a le plaisir de vous convier à la présentation-
dédicace de son livre, suivie d'un dîner

En présence de Mgr Norvan Zakarian



La recette de la vente des livres sera entièrement
réversée aux sinistrés du tremblement de terre
du village arménien de Vakif Koy en Turquie


Le samedi 3 juin 2023 à 19h
YAN'S CLUB, 5 Avenue Reille, Paris 14e
Réservation obligatoire
01 45 89 20 48 ou 07 83 56 34 28

Notre Village

un film de Comès Chahbazian

Projection dans le cadre du Festival International Jean Rouch

Samedi 6 mai 2023 à 17h
au Musée du Quai Branly-Jacques Chirac
37 Quai Branly, 75007 Paris




Au début des années 90, en Artsakh (Haut-Karabagh), des civils volontaires issus du même village font le choix des armes pour résister et libérer leur terre. Chacun tisse, tour à tour, la trame de leur histoire commune. Dans cette vie de village, chaque geste du quotidien est encore chargé de la présence sourde de la guerre. Et puis, trois décennies plus tard, l'Histoire se répète. La guerre s'embrase à nouveau.

<https://matierepremiere.be/Notre-Village-1>


<https://www.facebook.com/people/Notre-Village/100089490881949/>




DITES-MOI CE QUE VOUS LISEZ
ET JE VOUS DIRAI QUI VOUS ÊTES



Jérusalem et les Arméniens
Claude Mutafian
Les Belles Lettres 2022
518 pages
75 € (hors frais de port)



Aux origines de l'Arménie
Maxime K. Yevadian
Sources d'Arménie 2022
203 pages
25 € (hors frais de port)





Présent et avenir des langues
Gilbert Dalgalian
Lambert-Lucas 2020
240 pages
24 € (hors frais de port)

POUR PLUS D'INFORMATIONS, CONTACTER LA LIBRAIRIE DE NOR HARATCH
AU 06 81 66 57 84
OU ÉCRIRE À contact@norharatch.com

Առաքման ծախսերու խնայողութեան համար, կարելի է գիրքերը առնել ուղղակի «Նոր Յառաջ»-ի խմբագրատունէն:
Քանի մը գիրք սպասարելու պարագային՝ կապուիլ «Նոր Յառաջ»-ին, առաքումի գինը ճշդելու համար:



DITES-MOI CE QUE VOUS LISEZ
ET JE VOUS DIRAI QUI VOUS ÊTES



Cuisines Familiales de Syrie
Mouna Al-Ahdab Hammad
Hémisphères Maisonneuve & Larose
2022
428 pages
39 € (hors frais de port)

Arrivé d'ailleurs
Hraça Anouchavan Kirmiziyán
Véron 2020
274 pages
20 € (hors frais de port)

Le Dictionnaire Biographique
Hraïr Heratchian
Ara Krikorian
Kirk Publishing 2021
680 pages
39 € (hors frais de port)

POUR PLUS D'INFORMATIONS, CONTACTER LA LIBRAIRIE DE NOR HARATCH
AU 06 81 66 57 84
OU ÉCRIRE À contact@norharatch.com

Առաքման ծախսերու խնայողութեան համար, կարելի է գիրքերը առնել ուղղակի «Նոր Յառաջ»-ի խմբագրատունէն:
Քանի մը գիրք սպասարելու պարագային՝ կապուիլ «Նոր Յառաջ»-ին, առաքումի գինը ճշդելու համար:

«Nor Haratch»
83, rue d'Hauteville - 75010 Paris
Tél. 01 55 32 06 72
www.norharatch.com

*l'actualité arménienne
en français et en arménien*



de la lecture pour tout le monde!

journal tri-hebdomadaire en arménien
hebdomadaire en français
et abonnement site norharatch.com

image Maïda Chavak

ABONNEMENT FORMULE INTÉGRALE

Trois fois par semaine, **ՄՅՈՒՆՆԻ** le journal en arménien

Chaque jeudi, **NH Hebdo** en français, en supplément

Et abonnement à **Nor Haratch** en ligne

250 euros pour la France – 300 euros pour l'étranger

- Je m'abonne J'offre un abonnement
 Je me réabonne

Nom
Prénom(s)
Adresse
Commune
Email
Téléphone



Chèque à l'ordre de **NorH Publications**
à envoyer avec la présente fiche
à NORH Publications, 83 rue d'Hauteville, 75010 Paris

Virement bancaire
SOCIÉTÉ GÉNÉRALE -
Agence Paris St Vincent de Paul (03320)
IBAN - FR76 3000 3033 2000 0206 9946 930
BIC - SOGEFRPP

Téléphone : **01 55 32 06 72**
E-mail : abonnement@norharatch.com

ABONNEMENT FORMULE NH HEBDO

Chaque jeudi, hebdomadaire en français **NH Hebdo**

+ le numéro du jeudi en arménien **ՄՅՈՒՆՆԻ**

+ abonnement à **Nor Haratch** (en français) en ligne

150 euros pour la France – 190 euros pour l'étranger

- Je m'abonne J'offre un abonnement
 Je me réabonne

Nom
Prénom(s)
Adresse
Commune
Email
Téléphone



Chèque à l'ordre **NorH Publications**
à envoyer avec la présente fiche
à NORH Publications, 83 rue d'Hauteville, 75010 Paris

Virement bancaire
SOCIÉTÉ GÉNÉRALE -
Agence Paris St Vincent de Paul (03320)
IBAN - FR76 3000 3033 2000 0206 9946 930
BIC - SOGEFRPP

Téléphone **01 55 32 06 72**
Email abonnement@norharatch.com

*l'actualité arménienne
en français et en arménien*



de la lecture pour tout le monde!

NH Hebdo,
Nor Haratch du jeudi
et site norharatch.com (en français)